«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի

ՈՐՈՇՈՒՄ

8 Սեպտեմբերի 2023, N 2 - 5

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2022-2023 ուսումնական տարվա ընդունելության մրցույթով անցած, ուսման վարձը չվճարած, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու կապակցությամբ 2022-2023 ուսումնական տարում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսին կցագրված, վաղաժամկետ զորացրված և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242 - Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676 - Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ դիմած դիմորդ Սենիկ Արամի Շմավոնյանին 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում հրամանագրելու համար ուսման վարձը վճարելու թույլտվություն տալու մասին

Լսելով և քննարկելով՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2022-2023 ուսումնական տարվա ընդունելության մրցույթով անցած, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի 2022 թվականի հուլիսի 25-ի «2022-2023 ուսումնական տարվա բակալավրիատի առկա վճարովի ուսուցման համակարգի 1-ին կուրս ընդունվելու համար ուսման վարձը վճարելու թույլտվություն տալու մասին» N ՈՒԲ /83/ 2-Ա հրամանով ուսման վարձը չվճարած, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու կապակցությամբ ռեկտորի 2022 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսին կցագրելու մասին» N ՈՒԲ /112/ 28-Ա հրամանով 2022-2023 ուսումնական տարում տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի «Տնտեսագիտություն» մասնագիտության «Տնտեսագիտություն» կրթական ծրագրի բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսին (վճարովի հիմունքներով) կցագրված, պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից առողջական վիճակի պատճառով 2023 թվականի մարտի 18-ին վաղաժամկետ զորացրված և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242-Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676-Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ (22.08.2023) դիմած դիմորդ Սենիկ Արամի

Շմավոնյանին 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում հրամանագրելու համար ուսման վարձը վճարելու թույլտվություն տալու մասին հարցը:

Հիմք ընդունելով, որ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի 2022 թվականի հունվարի 26-ի N 05/11.2/548-2022 գրությամբ առաջարկվել է ազգային բանակ զորակոչվելու կապակցությամբ ուսումնառությունն ընդհատած, արցախյան 44-օրյա պատերազմին մասնակցած և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242-Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676-Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ դիմած ուսանողների ուսանողական իրավունքների վերականգնման հարցը քննարկել համալսարանի գիտական խորհրդի նիստում՝ հաշվի առնելով մարտական գործողությունների հետևանքով ստեղծված իրավիճակը (առողջական, հոգեբանական խնդիրներ, զինվորական կոմիսարիատներից զինվորական գրքույկների տրամադրման ուշացումներ և այլն), ինչպես նաև այն հանգամանքը, որ Սենիկ Արամի Շմավոնյանը սահմանված ժամկետում ուսման վարձը վճարելու թույլտվության և հրամանագրման համար չի դիմել համալսարան, քանի որ ունեցել է առողջական (ստացիոնար բուժման կարիք) և հոգեբանական խնդիրներ՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **Կցագրված դիմորդ Սենիկ Արամի Շմավոնյանին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի «Տնտեսագիտություն» մասնագիտության «Տնտեսագիտություն» կրթական ծրագրի բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսում 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակից հրամանագրելու համար թույլատրել վճարել 1-ին կուրսի 1-ին կիսամյակի ուսման վարձը:**

2. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2023 թ. սեպտեմբերի 8
Երևան